— Զաւէն հայրիկ, այդ կինը չեկաւ, մոռցաւ՞ ուտելիք բերել,— հարցուց,— ես շատ անօթի եմ:— Իսկ Զաւէն երբ չի լսեց, տղան եկաւ եւ սրունքներէն քաշելով՝ «Զաւէն հայրի՛կ, Զաւէն հայրի՛կ», — կանչեց. երբ տեսաւ թէ չիմանար, սկսաւ շրթունքը թուլացնել եւ պիտի սկսէր լալ, երբ Զաւէն քունէ արթնցածի պէս գրկեց տղեկը.

— Ի՞նչ է, սիրուն Արփենիս, ի՞նչ է, իմ հրեշտակս, մի՛ լար:

— Վախեցայ, որ դու էլ այդ պառաւին պէս պիտի չի լսես:

— Մի՛ վախեր, ես կը լսեմ. երթանք, պառաւը տեսնենք թէ ի՞նչ կընէ, ի՞նչ կը բերէ քեզի:

Երբ ներս պիտի մտնէին՝ տեսան փայտեայ մաքուր սեղանի մը վրայ սէր, մածուն, պանիր, խաղող, լաւաշ դրած, պառաւը կ'ուգար: Բարեբախտաբար տղաք ազնուապետական զգացմունք չեն բերէր իրենց հետ անդիի աշխարհքեն. Արփենի, որ արծաթեայ սկաւառակներու մէջ սովրած էր ուտել առանց ուշադրութեան այդ հողէ ամաններուն՝ ախորժակով կ'ուտէր. եւ Զաւէն թէպէտ դառնաց եալ հոգուով՝ մեծ մխիթարութիւն կը զգար այդ անմեղ հրեշտակին նայելով, որ իւր աչաց առջեւ նաեւ՝ չէր տեսեր որբութիւնը: Բայց պառաւը թեւէն դրդելով՝ զինք կը հրաւիրեր ուտելու. ծեր զինուորը թէպէտ կէս-գիշերվնէ ի վեր շարունակ կը ճանապարհորդէր, բայց ախորժակ չունէր ուտելու. պէտք էր Արփենի զինք կրկին-կրկին հրաւիրեր, որ ուտէ, ուստի քանի մը պատառ առաւ եւ բաժակ մը գինի խմեց:

Շփոթած էր ծեր զիովորը. տղան երբ կշտացաւ մայրիկը կը հարցնէր. իսկ պառաւը՝ ասպատակեն լուր կը հարցնէր. ուստի կարճ կապելու համար հրաժարական բաբէ մը տուաւ պառաւին, հեծաւ ձին եւ քանի մը ժամուան մէջ հասաւ Կ'աղզուան: Արփենի չիմացաւ այս ճանապարհորդութիւնը, վասնզի մեծ մասը քնացաւ եւ երբ հասան աչքերը բացաւ տեսաւ կանայք եւ աղջիկներ, որ զինք դրկէ գիրկ կը յափշտակէին, մէկը իր խաժուկ աչքերը կը գովեր, միւսը թուշերը կը պագնէր, վերջապէս փոքր տարեկից տղայք նաեւ իրեն հետ սկսան խաղալ. ուստի աղջիկը լաւ զբաղած էր այս կէս գիւղացուոյ, կէս քաղաքացուոյ՝ տան մէջ, որ Զաւէնի տունն էր: Իսկ Զաւէնի կինը, որ լաւ կը ճանչեր իւր էրկան բնաւորութիւնը եւ շատ խելօք կին էր, առաջ բան չի հարցուց, իսկ երբ առանձին մնացին, սկսաւ հարցնել թէ ի՞նչ էր այդ դառնութիւնը, թէ ստոյգ էր արաբաց Կոգովիտ ասպատակելը, թէ վտանգ կա՞ր իրօք Մամիկոնեան Տիկնոջ համար: Այն ատեն Զաւէն պատմեց համառօտիւ թէ ինչպէ՞ս ինք Սուրէնի եւ